

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՌԵՅԳԱՆԻՆ

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ ՏԻՒՐ ՌՈՆԱԼԴ ՌԷԿԸՆԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ

Ուաշինգթոն

Ձերդ Գերազանցութիւն,

Սոյն տողերը յղում է Ձեզ Հայ Առաքելական Եկեղեցու գլուխ Վազգէն Ա Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոսը, հայ ժողովրդի քրիստոնէական հաւատքի բազմադարեան կենտրոն Սուրբ Էջմիածնից ի Սովետական Հայկական Հանրապետութիւն:

Ձեզ ենք գրում յարգալից զգացումներով և խոր գնահատանքով դէպի ամերիկեան ժողովուրդը, որին ճանաչել ենք 1960 և 1968 թուականներին, ձեր մեծ երկիրը Մեր այցելութեանց առիթներով: Ճանաչել ենք ամերիկեան ժողովրդին իբրև կենսուրախ և բարեհոգի, իբրև խաղաղ ու ստեղծարար աշխատանքի ժողովուրդ: Վստահ ենք թէ մեր օրերին ևս այդ նոյն առաքինութիւններով ներշնչուած են ամերիկեան մեծ հայրենիքի զաւակները:

Ձերդ Գերազանցութիւն,

Այս գրութիւնը ուղղում ենք Ձեր քրիստոնէական խղճին, որպէսզի Ձեր միջազգային հեղինակութեան բարձունքից նպաստէք միջուկային պատերազմի արգելման, նպաստէք ընդհանուր զինաթափման հրամայականին, նպաստէք աշխարհում խաղաղ գոյակցութեան վերջնական հաստատման, այն ինչ երազեցին և ուխտեցին 1945-ին, Սան Ֆրանցիսկոյում Միացեալ Ազգերի Կազմակերպութեան հիմնադիր պետութիւնները:

Գիտակցում ենք, որ ընդհանուր զինաթափման և ազգութիւնների խաղաղ գոյակցութեան հրամայականները մեր օրերի բոլոր ժողովուրդների լայն զանգուածների, բոլոր Եկեղեցիների ու կրօնական կազմակերպութիւնների

գերագոյն իղձն են հանդիսանում և դէպի երկինք բարձրացող ամենաջերմ աղօթքը, որի պայծառ արտայայտութիւններից մէկը եղաւ Յունիսի 14-ի պատմական նամակը Ռուս Պրաւոսլաւ Եկեղեցու գլուխ՝ Նորին Սրբութիւն Պիմեն Պատրիարքի, ուղղեալ Ձերդ Գերազանցութեան, մի գրութիւն, որ Մենք ևս ողջունեցինք բարձր գնահատանքով: Մեկ միտքարութիւն պատճառեցին ու լաւատեսութեամբ համակեցին մանաւանդ սովետական կառավարութեան Ձեզ ուղղեալ առաջարկը՝ ատոմական զէնքերի փորձարկման մորատորիումի, և ծրագիրը՝ ատոմական և քիմիական բոլոր տեսակի զէնքերի աստիճանաբար կրճատման, որով նախատեսւում է այդ զէնքերի իսպառ վերացումը մեր աշխարհում մինչև մեր դարի վերջը:

Թոյլ տուէք Մեր վստահութիւնը յայտնել թէ Ձերդ Գերազանցութեան կառավարութիւնը ևս իր բոլոր միջոցներով պիտի նպաստի վերոյիշեալ փրկարար ծրագրերի կենսագործմանը, որով քսանմէկերորդ դարի արշալոյսը պիտի հանդիսանայ աւետաբերը մարդկութեան նոր կեանքի, առանց սրի և հրի:

Նոյն լուսաւոր յոյսերով, Մենք ևս դիմում ենք Ձեզ և Ձեր պատասխանատու գործակիցներին, որ ամէն բանից վեր նկատուի խաղաղ ու արդար մի աշխարհի, առանց պատերազմների մի աշխարհի կառուցումը, որի համար երկիր էր իջել մեր Փրկիչը Յիսուս Քրիստոս և խաչի տառապանքը կրել մարդկանց մեղքերի համար:

Քաջ գիտակցում ենք, որ մարդկութեան առջև կան նաև այլ հրամայական հարցեր, որոնք սպասում են իրենց լուծումը ստանալ: Բայց համոզուած ենք, որ նման հրամայական հարցեր իրապէս կարող են լուծուել միայն և միայն խաղաղութեան պայմաններում: Մանաւանդ յետ այսու ոչ մի պատերազմ, ոչ մի սպառազինութեան մրցավազք չի կարող որևէ քաղաքական, տընտեսական, ընկերային կամ բարոյական հարց լուծել: Ահա թէ ինչու մեր օրերին աւելի քան երբեք այժմէական է Յակովբոս առաքեալի պատգամը՝ «Արդարութեան պտուղը խաղաղութեամբ է սերմանւում նրանց համար, ովքեր խաղաղութիւն են անում» (Յակովբոս առաքեալ Գ 18):

Այո, մանաւանդ յետ այսու, ապագամիջեան բոլոր արդար հարցերը միմիայն խաղաղ գոյակցութեամբ հնարաւոր է լուծել:

Ահաւասիկ, Ձերդ Գերազանցութեան ուղղեալ Հայ Եկեղեցու առաջին սպասաւորի սրտի խօսքը, որ բխում է նրա քրիստոնէական խղճից և նրա ժողովրդի ողբերգական փորձառութիւններից: Յիրաւի, Հայ Եկեղեցին ու նրա հաւատացեալ ժողովուրդը, դարեր շարունակ ոտքի կոխան են եղել ու բազում անգամներ նահատակուել վասն Յիսուսի և վասն հայրենիքի ազատութեան աւելի հզօր դրացիների պատերազմների ընթացքում: Մի Եկեղեցի ու ժողովուրդ, որ ապրել է նաև մեր դարի առաջին ցեղասպանութիւնը, առաջին համաշխարհային պատերազմի՝ 1915—1916 թուականներին, որին զոհ է գնացել շուրջ երկու միլիոն հայ ազգաբնակչութիւն Արևմտեան Հայաստանում Օսմանեան տիրապետութեան շրջանին: Մի Եկեղեցի ու ժողովուրդ, որի կէսը հրաշքով փրկուեց Արևելեան Հայաստանում, որ այսօրուայ խաղաղ ու ապահով պայմաններում գոյատևող և զարգացող Սովետական Հայկական Հանրապետութիւնն է:

Մեր Եկեղեցին, մեր հաւատացեալ ժողովուրդը ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, որի աւելի քան կէս միլիոնը այսօր ձեր երկրի շինարար քաղաքացիներն են, չեն կամենում պատերազմ, չեն կամենում սպառազինումներ, չեն կամենում նոր ցեղասպանութիւններ, աշխարհակործան նոր ողբերգութիւններ:

Ձերդ Գերապանցութիւն, չգիտենք Մեր այս կոչը ի՞նչ արձագանք պիտի գտնի Ձեր հոգում, սակայն ամէն պարագային Մենք պիտի մնանք աղօթող, որ մարդասէրն Աստուած կօրհնէ դառնայ Ձեզ՝ իրագործելու աշխարհի ժողովուրդների լայն կանգուածների բաղձանքը ընդհանուր կինաթափման և պետութիւնների համերաշխ գոյակցութեան, որով Ձեր անունը ևս պիտի արձանագրուի պատմութեան գրքում իբրև մեծ ճարտարապետներից մէկը խաղաղ ու արդար մի ապագայ աշխարհի կերտման:

Մաղթում ենք Ձեզ հոգու խաղաղութիւն, համբերութիւն և լաւատեսութիւն:

«Այսուհետև կօրհնեցէք Տիրոջով և նրա կօրհութեան կարողութեամբ» (Առ Եփես. Զ. 10): Ամէն:

ՎԱՉԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
14 Յուլիսի 1986 թ.